

Բնագիտության, տեխնոլոգիայի կազմակերպումը 4-5-րդ դասարաններում

1. 2018-2019 Ուսումնական պլան

26. [Բնագիտության ուսուցումը](#) կազմակերպվում է բնագիտական, բնապահպանական, բույսերի և կենդանիների խնամքի նախագծերի ձևով, ուսումնական ազարակում, լաբորատոր պայմաններում, փորձի հիման վրա:

28. «Տեխնոլոգիա» դասընթացը կազմակերպվում է խոհանոցային, բույսերի և կենդանիների խնամքի, դիզայնի, խեցեգործական, առողջության պահպանության, ծեսերի, տոների, ցուցադրությունների, տոնավաճառների մասնակցության ուսումնական նախագծերի ձևով:

Կա՛մ բնագիտության դասընթացից, կա՛մ տեխնոլոգիայից հանել «Բույսերի, կենդանիների խնամք», (երկու դասընթացում էլ ներառված է) բնագիտություն դասընթացում ավելացնել աստղացուցարանը, իսկ տեխնոլոգիայում՝ պարտիզապուրակայինը:

Բնագիտության ուղղություններ-մոդուլներ

բնագիտական
Աստղացուցարան
ուսումնական ազարակ

Տեխնոլոգիայի ուղղություններ- մոդուլներ

Ծիսական Խոհանոց
դիզայն
խեցեգործություն
առողջագիտություն

Բնագիտության ուսուցման կարգի հետ կապված մի քանի քննարկումներ են եղել, մի քանի անգամ գրել են տիար Գևորգին, կարգում ոչ թե ցանկություններ են լինում, այլ՝ կազմակերպում, կարգում չի երևում կազմակերպումը: Եթե կազմակերպումը առաջարկում է դպրոցի ղեկավարը՝ առաջարկում են

Բնագիտության դասընթացը բաժանել նշված ուղղությունների մոդուլների, որոնք սահմանված կարգով հաստատվում է: Առաջարկում են Բնագիտության, տեխնոլոգիայի պարապմունքներին 25 հոգիանոց խումբը (դասարանը)բաժանել գոնե 3 խմբի, յուրաքանչյուր խումբ ունենում է իր

դեկավար-ուսուցիչը, այսինքն բնագիտության, տեխնոլոգիայի 1 ժամի համար վճարվում է 3 կամ 4 ուսուցիչ:

Փոփոխություն են առաջարկում նաև ուսումնական պլանում՝ 4-5-րդ դասարաններում Բնագիտության, տեխնոլոգիայի պարապմունքներն իրականացվում են նշված ուղղությունների համար մշակված մոդուլներով: 4-5-րդ դասարաններում այս պարապմունքին դասարանը բաժանվում է 10 հոգիանոց խմբերի: Սովորողի անհատական ուսումնական պլանում նշվում է սվյալ ուսումնական շրջանում ուսուցանվող մոդուլ-նախագիծը(ները):